

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը, սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսն է, արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով, եւ որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել կրեդիտի ստացման, ինչպես նաեւ դրա գործողության ողջ ընթացքում,

A - սպառողին տրամադրվող կրեդիտի սկզբնական գումարն է,

n - սպառողի կողմից կրեդիտի մարմանն ուղղված (կրեդիտի մայր գումար, տոկոսագումարներ եւ(կամ) այլ վճարումների գումարներ) վճարի (ներառյալ կրեդիտի ստացման պահին կատարվող վճարի) հերթական համարն է: Ընդ որում, մեկ օրվա ընթացքում կրեդիտի մայր գումարի, տոկոսագումարների եւ(կամ) այլ վճարումների կատարումը համարվում է մեկ վճարում,

N - կրեդիտի մարմանը (կրեդիտի մայր գումար, տոկոսագումարներ եւ(կամ) այլ վճարումների գումարներ) ուղղված վերջին վճարի համարն է՝ ներառյալ նաեւ կրեդիտի ստացման պահին կատարվող վճարը, որից հետո սպառողի կողմից կրեդիտային պայմանագրով ստանձնած պարտավորությունները համարվում են մարված,

K_n - սպառողի կողմից կրեդիտի ստացման պահին եւ(կամ) կրեդիտի գործողության ընթացքում կատարված հերթական՝ n -րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ եւ (կամ) այլ վճարումների գումարներ),

D_n - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել կրեդիտի ստացման օրից մինչև կրեդիտի գումարի հերթական՝ n -րդ մարման օրը ներառյալ: